ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 հունիսի 2020 թվականի N 137-Ա

«ԱՂԻՏՈՒԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքի 111-րդ հոդվածով,«Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով և հիմք ընդունելով Լ. Ղազարյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.2020թ. հունիսի 9-ից լուծել «Աղիտուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սուրեն Շահնազարյանի հետ 2015 թվականի հունիսի 9-ին կնքված N 5 աշխատանքային պայմանագիրը գործողության ժամկետը լրանալու պատճառով:

2. Լուիզա Ղազարյանին 2020թ. հունիսի 9-ից նշանակել «Աղիտուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3.«Աղիտուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Նարինե Աթայան	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ),
Ինոնա Բալայան	մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ,
Սուրեն Շահնազարյան	«Աղիտուի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն, հանձնող,

Լուիզա Ղազարյան «Աղիտուի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար, ընդունող:

4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

08.06.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հունիսի 08
ք. Կապան